

**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
2016թ. ՄԱՅԻՍԻ 16-Ի ՆԻՍՏԻ N 3-05/16 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Արձանագրություն N 3-05/16**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի

2016 թ -ի մայիսի 16-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ.(տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ.  
(տ.գ.դոկտոր-պրոֆեսոր.), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գալստյան Ս.Բ.  
(գ.գ.թ. դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.),  
Առաքելյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ.:

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

- 1.Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ամբիոններ ստեղծելու մասին.
- 2.«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի մասին.
- 3.Ընթացիկ հարցեր.

**Լսեցին** 1-Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ամբիոններ ստեղծելու համար առաջարկություն ներկայացրեց ռեկտորի պաշտոնակատար՝ Հ.Վ.Թորմաջյանը:

**Արտահայտվեցին**-Ա.Ա.Գուլյան, Ս.Բ.Գալստյան, Ս.Ա.Շահնազարյան:Հավանություն տալով զեկուցողի առաջարկին, նշեցին, որ համալսարանի կազմում անհրաժեշտ է ստեղծել «Ագրոնոմիայի, «Անասնաբուժության և անասնաբուժության, «Գյուղատնտեսության մեքենայացման և տրանսպորտային փոխադրումների» ամբիոններ:

**Որոշեցին** 1.1-Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բնական գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծել«Ագրոնոմիայի, «Անասնաբուժության և անասնաբուժության, «Գյուղատնտեսության մեքենայացման և տրանսպորտային փոխադրումների» ամբիոններ:

1.2-Մինչև սահմանված կարգով համապատասխան թափուր տեղերի մրցույթների կազմակերպումը «Ագրոնոմիայի» ամբիոնի վարիչի պարտականությունները հասարակական հիմունքներով հանձնարարել կ.գ. դոկտոր-պրոֆեսոր՝ Արտակ Ասճատուրի Գուլյանին, «Անասնաբուժության և անասնաբուժության» ամբիոնի վարիչի պարտականությունները՝ գ.գ.թ.դոցենտ՝ Սեյրան Ալեքսանդրի Շահնազարյանին, «Գյուղատնտեսության մեքենայացման և տրանսպորտային

փոխադրումների» ամբիոնի վարիչի պարտականությունները՝ տ.գ.թ. դոցենտ՝ Պավլիկ Յուրիկի Գասպարյանին:

**Լսեցին 2-**«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի մասին ներկայացրեց ռեկտորի պաշտոնակատար՝ Հ.Վ.Թոքմաջյանը:

**Արտահայտվեցին-Ա.Ա.Գուլյան, Թ.Գ.Գրիգորյան:** Հավանության արժանացնելով գիտական խորհրդի կանոնակարգն, առաջարկեցին այն հաստատել:

**Որոշեցին 2-**Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգը:

**Լսեցին 3-**Ընթացիկ հարցերի շրջանակներում քննարկվեց ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության 2016թ.-ի մայիսի 16-ի N 01-407 գրությունը, համաձայն որի ներկայացվեց buh.am կայքի համակարգող խորհուրդում Արցախի բուհերից ներկայացուցիչներ առաջադրելու հարցը: Շուշիի տեխնոլոգիական համալսարանից առաջադրվեց ռեկտորի պաշտոնակատար, տ.գ. դոկտոր-պրոֆեսոր՝ Հ.Վ.Թոքմաջյանի թեկնածությունը:

**Որոշեցին 3-** buh.am կայքի համակարգող խորհուրդում առաջադրել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, տ.գ. դոկտոր-պրոֆեսոր՝ Հ.Վ.Թոքմաջյանի թեկնածությունը:

<b>Նախագահ՝</b>	<b>ստորագրություն</b>	<b>Հ.Վ.Թոքմաջյան</b>
<b>Քարտուղար՝</b>	<b>ստորագրություն</b>	<b>Ա.Ա.Առաքելյան</b>